ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 166** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին տեղեկատվությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելու կարգի հաստատման մասին

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի իրագործման նպատակով եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված «Եվրասիական

տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի» թիվ 1 հավելվածի 134-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին տեղեկատվությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելու կարգը։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Ա. Սամին**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 21-ի
թիվ 166 որոշմամբ

ԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողով «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին տեղեկատվության ներկայացման

1. Սույն կարգը մշակված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ, Հանձնաժողով) եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ առանձնաշնորհային առեւտրի՝ մշտական հիմունքներով դիտանցումն իրականացնելու նպատակներով, որն անցկացվում է այդ թվում Համաձայնագրին համապատասխան խթանող եւ երկկողմ պաշտպանական միջոցների կիրառման համար հիմքերի առկայության սահմանման նպատակներով:

2. Անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները յուրաքանչյուր ամիս՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո՝ 40-րդ օրը, Հանձնաժողով են ներկայացնում Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ Համաձայնագրին համապատասխան Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին տեղեկատվությունը (այսուհետ՝ վիճակագրական տեղեկատվություն), որի ձեւաչափերը որոշված են հավելվածի համաձայն։

3. Վիճակագրական տեղեկատվության կազմի մեջ ընդգրկվում են սույն կարգի 2-րդ կետում նշված՝ հաշվետու ժամանակաշրջանում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների առնչությամբ ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ։

4. Վիճակագրական տեղեկատվությունը կազմվում է dBASE ձեւաչափով (5-րդ տարբերակից ոչ բարձր)։

5. Վիճակագրական տեղեկատվությունն ուղարկվում է Հանձնաժողովի առեւտրային քաղաքականության դեպարտամենտի էլեկտրոնային փոստի հասցեին (stat-vn@eecommission.org)։

6. Համաձայնագրին համապատասխան՝ երկկողմ պաշտպանական միջոցներ կիրառելու նպատակների համար անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները Հանձնաժողովի ներքին շուկայի պաշտպանության դեպարտամենտի պահանջով այդ պահանջն ուղարկելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնում են ապրանքների մասին հայտարարագրերում պարունակվող նկարագրությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ սույն կարգի հավելվածով նախատեսված տեղեկատվության՝ պահպանելով այդ տեղեկատվության նկատմամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջները։

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողով «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին տեղեկատվությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելու կարգի

ՁԵՎԱՉԱՓ

«Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին տեղեկատվության

Ցուցանիշի անվանումը	Դաշտի տեսակը	Դաշտի չափայնություն-յունը	Ապրանքների մասին հայտարարագրի վանդակի համարը	Տեղեկատվության բովանդակությունը	Ապրանքների մասին հայտարարագրի էլեկտրոնային պատճենի կառուցվածքում եւ ձեւաչափում տարրի նկարագրությունը
1	2	3	4	5	6
1. KS	սիմվոլային	2	-	տեղեկատվությունը ներկայացնող երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան (AM, BY, *KZ, KG,* RU)*	-
2. MY	սիմվոլային	6		ամսվա եւ տարվա թվային նշումը (առաջին 2 թվերը՝ ամիսը, վերջին չորս թվերը՝ տարին)	-
3.G36	սիմվոլային	7	36 (2-րդ տարր՝ մաքսատուրքի մասով արտոնություն)	ապրանքների մասին միայն այն հայտարարագրերի համար, որոնց 36-րդ վանդակի 2-րդ տարրում (մաքսատուրքի մասով արտոնություն) նշված է «ВТ» ծածկագիրը՝ մաքսավճարների վճարման արտոնությունների	20.17.31.2 catESAD_cu:CustomsDuty

1	2	3	4	5	6
				դասակարգչին համապատասխան*	
4. KTOV	սիմվոլային	10	33	ապրանքի ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան	20.17.11 catESAD_cu:GoodsTNVEDCode
5. KSO	սիմվոլային	2	15 («ա» ենթաբաժին)	ուղարկող երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան*	20.15.2 catESAD_cu:DispatchCountryCode
6. KTS	սիմվոլային	2	11 (առաջին ենթաբաժին)	վաճառող երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան*	20.16.5 catESAD_cu:TradeCountryCode
7. G38	թվային	19.6	38	զուտ քաշը (կգ)	20.17.6 catESAD_cu:NetWeightQuantity

1	2	3	4	5	6
8. G41_1	թվային	19.6	41	ապրանքի քանակը՝ լրացուցիչ չափման միավորով	20.17.41.1 cat_ru:GoodsQuantity
9. G41_2	սիմվոլային	13	41	պայմանական նշումը եւ լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան*	20.17.41.2 cat_ru:MeasureUnitQualifierName 20.17.41.3 cat_ru:MeasureUnitQualifierCode
10. G46	թվային	17.2	46	ապրանքի վիճակագրական արժեքը (ԱՄՆ դոլարով)	20.17.10 catESAD_cu:StatisticalCost
11. PR	թվային	17.2	47	Տրամադրված սակագնային առանձնաշնորհման գումարը՝ ելնելով ներմուծման մաքսատուրքի պայմանականորեն հաշվեգրված գումարից (գումարը նշվում է ԱՄՆ դոլարով՝ ապրանքների մասին	20.17.39.2 catESAD_cu: PaymentAmount

1	2	3	4	5	6
				հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով) այն հաշվեգրված մաքսատուրքի մասին տեղեկությունները (վճարման տեսակ՝ 20xx), որի համար նշված է մաքսատուրքերի վճարման առանձնահատկության «УН» ծածկագիրը այն մաքսավճարների եւ այլ վճարների վճարման առանձնահատկությունների դասակարգչին համապատասխան, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին*	
12. SERT	սիմվոլային	50	44	ապրանքի ծագման մասին սերտիֆիկատի համարի եւ տրամադրման ամսաթվի մասին տեղեկությունները (06018 փաստաթղթի	20.17.37.1 cat_ru:PrDocumentNumber 20.17.37.3 cat_ru:PrDocumentDate

1	2	3	4	5	6
				ձեւի (ապրանքի ծագման մասին EAV ձեւի սերտիֆիկատ) ծածկագրով տեղեկությունները՝ փաստաթղթերի տեսակների դասակարգչին եւ մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող տեղեկություններին համապատասխան)	

Ծանոթագրություններ.

1. Սույն ձեւաչափին համապատասխան տեղեկատվությունը ներկայացվում է նիշքի տեսքով՝ հետեւյալ անվանմամբ՝

   VM_XX_MM_YYYY.dbf,

   որտեղ՝

   XX՝ տվյալներ ներկայացնող երկրի ծածկագիրը (AM, BY, KZ, KG, RU) ՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան*.

   MM՝ այն հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա թվային նշումը, որի համար ներկայացվում են տվյալներ.

* Հաստատված է «Մաքսային հայտարարագրերը լրացնելու համար օգտագործվող դասակարգիչների մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմամբ*

YYYY՝ այն տարվա թվային նշումը, որի հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվում են տվյալներ։

2. Տվյալների ներկայացվող նիշքում ընդգրկվում է հունվարից մինչեւ հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամիսն ընկած տեղեկատվությունը։

3. Տվյալների հաշվառումը վարվում է ապրանքների մասին հայտարարագրում նշված՝ ապրանքի բացթողման ամսաթվով։

Ներկայացվող նիշքը ուղեկցվում է լիազորված մարմնի տեղեկատվությամբ՝ հետեւյալ տեսքով՝

Կոնտակտային անձը	
Էլեկտրոնային փոստը	
Հեռախոսահամարը	
Նիշքի անվանումը	